



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՒՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

N 325 - Ա

30 օգոստոսի 2019 թ.

**ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ ու 209-րդ հոդվածների, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի «Քաղաքացիական ծառայողի ծառայողական գործուղման պայմաններն ու կարգը սահմանելու մասին» N 1239-Ն որոշումը կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Լուսինե Վարդանյանին 2019 թվականի օգոստոսի 30-ին, մեկ օրով, գործուղել Մարտունու տարածաշրջան՝ առողջապահական կազմակերպություններում այցելություն կատարելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ:



(Handwritten signature)

ՄԱՐԶՊԵՏ ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆՍՅԱՆ GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք.Գավառ